ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՄՆ «Նաիրիի արհեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» (1.0 դրույք) մասնագիտության գծով արտադրական ուսուցման վարպետի, ինչպես նաև «Ֆիզիկա» (տարեկան 186 դասաժամ), «Մաթեմատիկա» (տարեկան 910 դասաժամ), «Կենսաբանություն» (տարեկան 286 դասաժամ), «Ինֆորմատիկա» (տարեկան 268 դասաժամ), «Աշխարհագրություն» (տարեկան 102 դասաժամ), առարկաների ուսուցչի թափուր տեղեր:

Արտադրական ուսուցման վարպետների և ուսուցիչների վարձատրությունը որոշվում է՝ ըստ հաստիքացուցակի, տարիֆիկացիոն ցուցակի և դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր հարցազրույցի միջոցով՝ քոլեջի կողմից կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը:

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

1) հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

2) մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) Դիմում
2) Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) բնօրինակը
3) Անձնագիր (բնօրինակը և պատճենը)
4) Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5) Ինքնակենսագրություն (Ձև 4)
6) Մեկ լուսանկար 3×4 չափի
7) Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ – ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ:
8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն):
9) Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան կոչումը հաստատող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած, 09.09.2026թ.-ից մինչև 23.09.2026թ (ներառյալ) ամեն օր ժամը 10^{00}-ից 16^{00}-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:՝

Մրցույթը տեղի կունենա 2026թ. **սեպտեմբերի 28-ին,** արտադրական ուսուցման վարպետի համար ժամը 11^{00}-ին, իսկ ուսուցիչների համար ժամը 13^{00}-ին:

«Նաիրիի արհեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ ք. Եղվարդ, Երևանյան 10:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094 83 45 04:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Կ. ՄԵՀՐԱԲՅԱՆ